# Է. Բ. ԱՂԱՅԱՆ

(Մենդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի լեզվաբան, Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ է. Բ. Աղայանի ծննդյան 60-ամյակը:

Էդուարդ Բագրատի Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին, Մեղրիում: Տեղում ստանալով միջնակարգ կրթություն, 1933 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը, որն ավարտել է 1938 թ.: Նույն թվականի դեկտեմբերին ընդունվել է ասպիրանտուրա գրաբարի գծով: 1941 թվականին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1945 թ.՝ դոկտորական դիսերտացիա: 1946 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1953 թ. նա ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ:

1939 թվականից է. Աղայանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում, ուր ավանդել է լատիներեն, լեզվաբանության ներածություն, գրաբար, ապա և՝ պարսկերեն, պարսից գրականություն, Արևելքի գրականություն, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն: Դասախոսական աշխատանքին զուգընթաց նա կատարել է նաև վարչական աշխատանքներ. վարել է համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանի, համալսարանի գիտական մասի պրոռեկտորի, արևելյան լեզուների ամբիոնի վարիչի, Հայկ. ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտորի տեղակալի պաշտոնները. 1954 թվականից մինչև այժմ նա համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչն է. ինչպես նաև հասարակական կարգով ղեկավարում է ակադեմիայի լեզվի ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության բաժինը և համալսարանի հայագիտական կենտրոնը:

Հարուստ ու բազմազան է եղել է. Աղայանի գիտական հետաքրքրությունները: Նրան հատկապես զբաղեցրել են լեզվի գիտության տարբեր բնագավառներ՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ բարբառագիտություն, հնչյունաբանություն, բառագիտություն, ստուգաբանություն, հայոց լեզվի ու հայ լեզվաբանության պատմության խնդիրները, ինչպես նաև բանասիրական այլ հարցեր:

Իր դասախոսական և վարչական աշխատանքներին զուգընթաց պրոֆ. Աղայանը հրատարակել է 70-ից ավելի գիտական աշխատություններ. «Լեզվաբանության ներածություն» (ունեցել է մի քանի հրատարակություն՝ 1949, 1952, 1963, 1967 թթ., նույնը 1960 թ. հրատարակվել է ռուսերեն), «Մեղրու բարբառը» (1954 թ.), «Հայ լեզվաբանության պատմություն» (հ. I, 1958 թ., հ. II, 1962 թ), «Գրաբարի քերականություն» (հ. I, գիրք Ա., 1964 թ.), «Հայոց լեզու» (միջնակարգ դպրոցի դասագիրք՝ Հ. Բարսեղյանի հեղինակակցությամբ, 1965 թ., հետագայում ունեցել է մի քանի հրատարակություն), «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (1967 թ.) և այլն:

Նրա հոդվածներից առանձնապես հիշատակելի են «Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 5), «Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից» («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1), «Լեզվական կառուցվածքի մակարդակները» («Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1) և այլն: Նուտով լույս կտեսնի հեղինակի «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանը» մեկ հատորով, որը պարունակում է 100.000 բառ:

Սկսած 1953 թվականից է. Աղայանը իր ժամանակի զգալի մասը նվիրել է Հ. Աճառյանի հայոց լեզվի «Վիկատար քերականության» և այլ աշխատությունների հրատարակության պատրաստման շնորհակալ գործին:

Է. Աղայանը մեկն է սովետահայ այն լեզվաբաններից, որոնք տասնյակ տարիներ առաջ են մղել հայ լեզվաբանական միտքը: Նա կառուցվածքային լեզվաբանության հիմնադիրներից է հայ իրականության մեջ. նրա հրապարակած մի շարք հետազոտություններ կատարված են լեզվաբանական նորագույն մեթոդների ու սկզբունքների կիրառմամբ:

Շատ մասնագետներ է աճեցրել պրոֆ. Աղայանը, որոնք այսօր հաջողությամբ աշխատում են հայագիտության զանազան բնագավառներում, նրանցից շատերը գիտության թեկնածուներ և դոկտորներ են:

Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել է. Աղայանի գործունեությունը. նա պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով. նրան շնորհված է գիտության վաստակավոր գործչի կոչում:

Վաստակաշատ գիտնականը ապրում է իր կյանքի հասուն շրջանը, որը լի է ստեղծագործական մտահղացումներով: Ցանկանք նրան առողջ և երկար տարիների բեղմնավոր կյանք:

Պ. ՇԱՐԱԲԽԱՆՅԱՆ